

ԲԵՆԻԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

2-40

ԿՈՒՍԱԿԿՐՈՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՆԱԲԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ Ե

1007
32482

ԱՆԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ
ՔՐԻՍՏՈՆԵՑՈՒԹՅՈՒՆ ՉԵ

4267

1917



ՍՄՏԱՆԻ ԿՈՄԻՏԵ

1921

ԿՐԻՍԱԿՐՈՆԻՓՅՈՒՆԸ ԱՆՍՈՒԱԿՈՒՔՅՈՒՆ Ե

Հայ ժողովուրդ, լավ ուշք դարձրու այս վերնա-
գրին և լսի՛ր ինձ:

Քրիստոսը ամուսնական խնդիրը բողոքովին ա-
զատ ե թողել. ով կամենում ե, պետք ե ամուսնանա,
ամուսնանալը լավ ե պրոնիկոթյունից:

Պողոս առաքյալն ասում ե. «Ամեն մարդ թող
էր կինն ունենա, վոր չը պրոնիկանա»: Նույն ասա-
քյալը. «Ով վոր ժուժկալ մնալ չի կարող, թող ամուս-
նանա. վորովհետև ավելի լավ ե ամուսնանալ, քան
վատիլը»:

«Յեպիսկոպոսին վայել ե, վոր մի կին ունենա»:

«Ամուսնությունը ամեն կողմից պատվական ե
և անկողինը սուրբ»:

«Ամուսնությունը Աստու աբբայության համար
առաքինություններ սովորեցնող մի դպրոց ե» (Տեր-
սուղիանոս):

«Ամուսնությունը հակառակ ե բնական որինաց.
յեկեղեցին ընկել ե ծայրահեղության. մեջ՝ բնավ չա-
մուսնանալ» (Ներսես աբբեպ. Մելիք-Քանդյան):

«Յեպիսկոպոս, յերեց կամ սարկավազ չը հեռաց-
նեն իրենց կնոջը յերկուդածության պատճառով. յե-
թե կը հեռացնեն մերժվեն յեկեղեցուց. իսկ յեթե հա-
մառին, թող կարգալուծ լինեն»: (Առաքելական կա-
նոն 5-րդ հոդված):

«Յեթե յեպիսկոպոսը, յերեցը կամ սարկավազը
կը հրաժարվեն ամուսնությունից, մահից, պնուց, վոչ
թե ժուժկալության համար, այլ պիղծ համարելով և
անարգելով արարչագործությունը, դրանք կամ ուղը-
վին կամ կարգալուծ լինեն»: (Առաքել. կանոն 46-րդ
հոդված):

